



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս, Լիբանան

Թիւ 32/21,

Անթիլիաս, Ս. Զատիկ 2021

Նորին Վսեմութիւն
Տիար Նիկոլ Փաշինեան
Վարչապետ
Հայաստանի Հանրապետութեան
Երեւան

Սիրելի՛ Պրն. Վարչապետ,

“Միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը”
(Մատթ. 28. 20): Այս խոստումը տուաւ Յարուցեալ Քրիստոս իր առաքելութիւնը շարունակելու կոչուած աշակերտներուն:

Յարուցեալ Քրիստոսի հաւատով ու յոյսով շաղախուած, եկեղեցին մնաց կանգուն ու կենսունակ՝ ահաւոր ջարդերուն, հալածանքներուն ու քննադատներուն դիմաց: Այսպէս եղաւ նաեւ Քրիստոսի յարութեամբ հզօրացած եւ ժողովուրդին տագնապներուն հետ ինքզինք նոյնացուցած հայ եկեղեցին: Արդարեւ, իր հոգեմտաւոր ստեղծագործութեամբ ու ժողովրդանուէր ծառայութեամբ, հայ եկեղեցին յարուցեալ Քրիստոսի հրաշագործ ներկայութիւնը ապրեցուց մեր կեանքին մէջ:

Այսօր, բազմազան տագնապներով շրջապատուած մեր ժողովուրդի կեանքին մէջ մեր եկեղեցին, հաւատարիմ իր սրբազան առաքելութեան, կոչուած է Քրիստոսի յարութեան շունչով վերանորոգելու մեր կեանքը՝ աստուածաշնչական նշմարտութիւններու ու արժէքներու կենսագործումը եւ ծառայութիւնը դարձնելով իր վկայութեան սեւեռակէտը:

Թող յարուցեալ Քրիստոս վանէ մեր հայրենիքի կեանքէն ամէն տեսակ չար ու չարիք, որպէսզի հայրենի մեր ժողովուրդը կարենայ միասնական ոգիով ու վերանորոգ հաւատով ու կամով փայլուն նոր էջ մը բանալ Հայաստանի պատմութեան մէջ:

**Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:**

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական ջերմ սիրով,

Աղօթարար՝

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**